ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ և ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2005Թ. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱԳՐԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՄԲ ԿՆՔՎՈՂ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՍՏՈՐԱԳՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1992թ.-ին դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ի վեր Հայաստանի և Չինաստանի միջև հարաբերությունները և համագործակցությունը հաստատուն կերպով զարգացել է՝ ներառելով նոր ոլորտներ: Ներկա պահին երկու երկրների միջև էականորեն ակտիվացել են քաղաքական երկխոսությունը և միջխորհրդարանական և միջկուսակցական կապերը, համագործակցությունը մշակութային, գիտակրթական և առևտրատնտեսական ոլորտներում:

Չինաստանը հանդիսանում է Հայաստանի կարևորագույն գործընկերներից մեկը և երկրորդ խոշոր առևտրային գործընկերը Ռուսաստանից հետո: 2016թ. արդյունքներով ապրանքաշրջանառությունը ՀՀ և ՉԺՀ միջև կազմել է մոտ 408 մլն. ԱՄՆ դոլար[1]: ՀՀ-ում գրանցված են չինական կապիտալի մասնակցությամբ 23 ձեռնարկություն:

2010-2012թթ. ՉԺՀ կառավարության անհատույց օգնության տեխնիկատնտեսական ծրագրերի շրջանակներում ՉԺՀ-ից ՀՀ են ներկրվել 88 շտապ օգնության մեքենաներ և 249 քաղաքային ավտոբուսներ: 2017թ. հունվարին ՉԺՀ կառավարությունը հավանություն է տվել Հայաստանին ևս 200 շտապ օգնության մեքենա և ռեանիմոբիլ նվիրաբերելու ծրագրին: Ընթացքի մեջ են գտնվում անհատույց տեխնիկատնտեսական օգնության ծրագրի շրջանակներում Հայաստանի հանրային հեռուստատեսության արդիականացման և Երևանում չինարենի խորացված ուսուցմամբ դպրոցի ստեղծման ծրագրերը:

Ընթացքի մեջ են Հայաստանում հայ-չինական համատեղ պղնձաձուլական գործարանի հիմնադրման շուրջ բանակցությունները: Չինական կողմի հետ բանակցվում են տնտեսական կարևորություն ներկայացնող մի շարք գյուղատնտեսական, առևտրային և արդյունաբերական ոլորտի նախագծեր:

Հաշվի առնելով Չինաստանի հետ համագործակցության զարգացման և խորացման կարևորությունը՝ ՀՀ ԱԳՆ նպատակահարմար է գտնում «Հայաստանի Հանրապետության կառավարության և Չինաստանի Ժողովրդական

---

[1] Համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների

Հանրապետության կառավարության միջև 2005թ. Համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին հայտագրերի փոխանակմամբ կնքվող» համաձայնագրի ստորագրումը :

ԱԳ Նախարարի տեղակալ

Արմեն Պապիկյան